ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Քանաքեռի 14-րդ փողոցն (սկսվում է Զաքարիա Քանաքեռցու փողոցից, հատում 15-րդ փողոցը, հասնում մինչև Քանաքեռի 14-րդ փողոցի հ.32 հասցե) անվանակոչել բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս, ազգային-հասարակական գործիչ Մկրտիչ Սարգսյանի անվամբ՝ «Մկրտիչ Սարգսյան փողոց»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մկրտիչ Դիվինի Սարգսյանը ծնվել է 1924թ. մայիսի 2-ին, Ջավախքի Ախալքալաք քաղաքում: 1931-1941թթ. սովորել է Ախալքալաքի միջնակարգ հայկական դպրոցում:

1942-1945թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, վարել հրաձգային վաշտի հրամանատարի, գումարտակի հրամանատարի տեղակալի պաշտոնները:

1945-1947թթ. աշխատել է Ախալքալաքի միջնակարգ դպրոցում՝ հայոց լեզվի և գրականության ուսուցիչ և զինղեկ:

1947-1951թթ. ուսանել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետում:

1952-1959թթ. աշխատել է ՀԿԿ կենտկոմում:

1959-1962թթ. եղել է «Գրական թերթի» գլխավոր խմբագիրը:

1962-1970թթ. ՝ Հայպետհրատի գլխավոր խմբագիրը:

1975թ. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Մկրտիչ Սարգսյանին շնորհվել է հանրապետության կուլտուրայի վաստակավոր գործչի կոչում: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի» I և II աստիճանների շքանշաններով և բազմաթիվ մեդալներով:

1975թ. ընտրվել է ՀԳՄ քարտուղար և համատեղությամբ՝ կուս. բյուրոյի քարտուղար: Աշխատել է մինչև 1986թ.:

Մկրտիչ Սարգսյանը գրականություն մուտք է գործել որպես բանաստեղծ, հրատարակել է «Երգեր» (1957), «Գետակ» (1959), «Կարոտի երգ» (1966), «Աստղաբույլ» (1983) ժողովածուները: Սակայն նրան մեծանուն գրողի հռչակ են բերել արձակ ստեղծագործությունները՝ «Կյանքը կրակի տակ» (1963), «Ճակատագրով դատապարտվածները» (1967), «Սերժանտ Կարոն» (1970), «Չմակարդվող արյուն» (1985) ժողովածուներում ամփոփված պատմվածքները, վիպակներն ու վեպերը, որոնց գլխավոր թեման պատերազմն է:

Նրա ստեղծագործությունները թարգմանվել են աշխարհի տասնյակ լեզուներով: Նրա երկերի հիման վրա նկարահանվել է հեռուստաֆիլմ («Շահմարի առեղծվածը») և քանիցս բեմադրվել են տարբեր թատրոններում («Սերժանտ Կարոն» և այլն):

Մկրտիչ Սարգսյանը մահացել է 2002թ. հունիսի 23-ին, Երևանում:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում է Քանաքեռի 14-րդ փողոցն անվանակոչել բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս, ազգային-հասարակական գործիչ Մկրտիչ Սարգսյանի անվամբ՝ «Մկրտիչ Սարգսյան փողոց»:

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Քանաքեռի 14-րդ փողոցն Մկրտիչ Սարգսյանի անվամբ անվանակոչելու միջնորդություն է ներկայացվել Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանի և «Ջավախք» հայրենակցական բարեգործական միության նախագահ, ԱԺ պատգամավոր Շիրակ Թորոսյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ